

ԴՈՒՐՅԱՆ ՊԱՏՐԻԱՐԲԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԹԵՄՈՒՄ

Փետրվարի 25-ին, Դամասկոսի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Շափարը եպիսկոպոս Դուլունճյանի նախագահությամբ, Ս. Թարգմանչացի աղգային մանկապարտեզի սրահում, համաղգային շուրջով նշվել է երջանկահիշատակ եղիշի պատրիարք Դուրյանի ծննդյան 100-ամյակը: Հորեկանական հանդիսության ներկա է եղել նաև Դամասկոսի հայ կաթողիկե համայնքի մեծավոր գերապատիվ Տ. Եղվարդ վարդապետ Կրտին: Հանդիսությունն սկսվել է Միացյալ Արարական Ռեսպուբլիկայի հիմնի նվագով:

որից հետո բացման խոսքով հանդես է եկել արժանապատիվ Տ. Պարգե քահանա Պարտազճյանը: Ապա Ա. Օհանյանը ներկայացրել է Դուրյանի կյանքը, Ն. Հակոբյանը՝ Դուրյան գրագետը: Հանդեսի ժամանակ գործադրվել է նաև գեղարվեստական ճոխ հայտագիր՝ բաղկացած շարականներից, երգերից, խմբերգերից և արտասանություններից: Դամասկոսի թեմի բարեխնամ առաջնորդ սրբազանը խոսել է «Դուրյան մարդը» թեմայի շուրջ, ներկայացնելով մեծ ուսուցչին որպես տիպար հոգեւորական և ազնիվ մարդ:

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳԻՐԸ

Ամենայն Հայոց Հայրապետական դարավոր Աթոռի այս պաշտոնական ամսագիրը, «Էջմիածին», իր բարձր կոշտմին և առաքելության համապատասխան բովանդակությամբ կհրատարակվի ամեն ամիս կանոնադրապես և խնամյալ ծրագրով:

Անիկա ունի ղխավորապես եկեղեցական, մշակութային, պատմական և բանասիրական ուղղություն և այլադան և հյուսիս պարունակություն: Կարձանագրեր նաև իր լայն շրջապատի կրթական և իմացական շարժումներուն և գործունեությունաց պատկերները այնպիսի գեղեցիկ դասավորությամբ մը, որ ցույց կուտա, թե հանդեսին խմբագրությունը ունի և կտածն որոշ հոգածություն, արտաքին աշխարհի հայությունը տեղյակ և իրազեկ պահելու թե՛ մեր վերածնած Հայրենիքի և թե՛ Հայրապետական Աթոռի հոգեկան և մտավորական գործունեության շուրջ:

Որեւէ հայ տուն կամ հայ անհատ, որ մեր գեղեցիկ Հայաստանի և Առաքելական Եկեղեցւոյ թրթումները կզգա իր ներսիդին, այս մեծարժեք ամսագրի մեջ պիտի գտնե մեր նախահայրերու անայլալ հոգին, անոնց տեղականորեն ապրող սրտին բաբախումները, որոնք անշիջանելի լուսավորի մը նման կրերեն տաքություն և ճառագայթ, կպայծառացնեն մեր պապենական երազը և այս հյուրընկալ երկիրներուն մեջ ցրիվ եկած հայ տնակներուն կուտան ապրելու հավատք և կամք:

Այս ամսօրյա հանդեսը ունի 64 մեծագիր և երկսյունակ էջեր, ծրարված սիրուն և գեղատեսիլ կափարիչի մը տակ, որուն ճակատը գրված է «Էջմիածին» հմայիշ անունը այնպիսի հստակ և հայադրոշմ տառերով, որոնք կարծես «Լուսավորչի կանթեղ»-ին նման կախված կմնան ալեգարդ Արարատի և Ս. Էջմիածնի երկնամերձ գագաթներուն վերև:

և անոնց՝ անբախտելիորեն իրարու կապված դարավոր էությունը կզարծնեն անհուն խորհուրդներով լեցուն շտեմարան մը:

«Էջմիածին»-ը կհասնի մեզի շատ սիրելի այցելուի մը նման, իր զրպաններուն մեջ միեւր ու շաբաթ լեցուցած ժպտուն մեծ մայրիկի կարոտով: Ամեն ամիս անիկա կրեր մեզի պեսպիսուն և թանկարժեք նվերներ: Կուգա դարդարելու համար մեր միտքն ու հոգին, մեր տունն ու զրադարանը և մեր մտածման օրերն ու ժամերը: Քիչ հետո, կըլլա հաղորդություն և շունչ, կանուցանե զմեզ և հայ լեզվին և հորենական զգացումներուն կարոտով լեցված մեր էությունը կառաջնորդե դեպի մեր հոգիներուն ճշմարիտ բնագավառը, Հայաստան:

Այսպես, կյանքով ու խանդով «Էջմիածին»-ը պատահական հյուր մը չէ, այլ հին օրերու մնացուն և մտերիմ բնտանեկան անդամ մը: Անիկա զմեզ կճանչնա մեր մանկական օրերին ի վեր, նույնիսկ անկե ալ առաջ: Ծանշցեր է անկասկած մեր պապերն ու անոնց պապերուն պապերը: Նաև մեր անհամար սերունդներու մամիկներու շրթներն է օծեր լույսով ու աղոթքով, անոնց տկար ու տառապակոծ կուրծքին տակ անթեղեր՝ ապրելու բուռն տենչ, հաղթահարելու պողպատե հավատք և լույսին վազելու անտեղիտալի նվիրում:

Ղարիբ հայր այս հյուրընկալ կայքերուն մեջ կապրի Արարատով, Երևանով, Էջմիածնով և անոնցմե ճառագայթող շեն ու ջերմիկ ցուրքերով: Արարատին մեջ կգտնե ան Էջմիածինը և Էջմիածնի մեջ՝ Արարատը:

Ահա թե ինչու այս երկու սրբությունները դեմ դիմաց՝ եկեր և միացեր են Ամենայն Հայոց Հայրապետության ամսագրի ճակատին վրա և անբախտելի ամբողջություն մը

կազմած՝ կուգան հսկելու մեր հոգեկան ապրումներուն վրա և հայ տան շնչառութիւնն զներև:

«Էջմիածին»-ը նաև զանգակատուն մըն է սիրո և խաղաղութիւնի:

Անիկա նոյան տապանն արձակված աղափնիին նման իր թևերուն վրա կկրն խաղաղութիւն ավետիւր, ունի հայրապետական շահութիւն և հորդոր, որպէսզի մարդիկ հուշքի գան, արորն առնեն զենքի տեղ և եղբայրութիւնն ընեն սահմանադուր թաղամաշարչար ազգերուն: Այս սիրո և փոխադարձ հասկացողութիւն փրկարար ոգին խորացնեն և ամուր հիմներու վրա պահեն մանավանդ նույն հոգիներուն մեջ, որ հոգնած և արլունոտ երկրագունդի ճակատագիրն են դրեր իրենց սեղանին վրա:

«Էջմիածին» գրեթէ իր բոլոր թիվերուն մեջ կուտա մեր սիրեցյալ Հովվապետին կոնդակները, որոնք շնորհք և օրհնութիւն կտարածեն հայ կամ ալլազգի ժողովրդանվեր հաստատութիւնց և առաջնորդներուն վրա: Կհորդորեն, որ խաղաղութիւն մը ընթանա, միասնական ճիգերուն փարինք և շինարարութիւն մը բարձրանանք և բարձրացնենք:

Բացառիկ և հուզիչ իրականութիւն չէ՞, որ մեր ազգընտիր Հայրապետն Վաղգն Ա խաղաղութիւն ատաբայ մը հուշակվեցալ և սիրո ու եղբայրութիւն շքանշանն ալ զարդարեց Անոր կուրծքը: Նույնպէս, գեղեցիկ և հուզիչ առթի մը չէ՞, որ «Էջմիածին» համարներուն մեջ միշտ արձագանքը կունենա Անոր հայրական խաղաղասեր ու սրտագրավ խոսքերուն:

Իրավամբ, այս հանդեսն ամբողջ հմուտ ու ձարտար ձեռքերու մեջն է:

Խմբագրականները հասուն, նվիրյալ և հայրենասեր գրիչներե կծորին և իրենց վերցուցած նյութերուն պայծառ լուսը կձգեն ընթերցող հասարակութիւն վրա: Անոնց արձակագրութիւնը, լեզվական հարդարանքը ճկուն, անսայթաք գնացքով եզական կմանն արդարև:

Օրինակի համար անցյալ հուլիս ամսվան խմբագրականը «Հայ Եկեղեցու երկու սլունները» վերնագրով շատ հասուն տեսութիւններ կբանար և ինքզինքը կպարտադրեր ընթերցողին վրա: Իրավ շատ հաճելի երևույթ մը եղալ, որ արտասահմանյան մեր բոլոր հավատարիմ թերթերը անմիջապէս արտադրեցին զայն և հանձնեցին իրենց ընթերցողներու ուշադրութիւն:

Իսկական հաճույք է նշմարել նաև, որ անոր մեջ գրչի և արվեստի վաստակավոր վարպետները վեր կառնվին ուսումնասիրութիւն մը: Արեւելահայ և արեւմտահայ դեմքեր կբանան իրենց արժեքավոր վաստակները:

Այս խորապէս թելադրիչ պարտականութիւնը մշակութիւն նվիրված որևէ հանդեսի համար կբերե վարկ և մեծարժեք որակ:

Առանձին ուշադրութիւն արժանի է Կաթողիկոսարանի կյանքին հատկացված արձանագրութիւնց բաժինը: Հոն ուշի-ուշով կկարդանք պաշտոնական կամ մտերմիկ այցելութիւն, գործի, կրթական ջանքերու և հաջողութիւնց համառոտ տեղեկագրութիւններ, որոնք կառնեն ու կտանին մեզ դեպի էջմիածին կամ Երևան, ներկա կդարձնեն բոլոր անցուղարձներուն, բոլոր ճիգերուն և աշխատանքներուն և մեզը հավաքելու գացող բոլոր աշխույժ մեղունքու վազբին:

Հոգևոր ձեմարանի հատկացված լայն էջերը, որոնք նորահաս ուժերու բերած նյութերն ու տեսութիւնները կամփոփեն արձակ կամ չափածո կտորներու մեջ, շատ անգամ մեզի կծանոթացնեն իսկական տաղանդի ծլարձակումներ, որոնց հանդեպ «Էջմիածին» հանդեսի խմբագրութիւնը հայտնապէս ունի որոշ հոգածութիւն և խնամք:

Չեմ կրնար պահ մը կանգ չառնել Արամայի Սահակյանի շուրջ, ձեմարանի ուսանող, որ «Պապ» վերնագրով ոտանավոր մը տաղաչափած է և անոր մեջ դրած՝ իսկական և հուզիչ պատկերը հայու ճակատագրին անցյալ և ներկա իրականութիւն: Այդ ոտանավորը սիրուն և սրտառուլ պատկեր մըն է: Զմայելի ոգեկոչում ու տենչանքն է այն բլուրավոր նորահաս թոռնիկներուն, որոնք կհիշեն իրենց տարաբախտ մեծ պապերը, անոնց լուռականի քաջ հոգին, անոնց որսորդական արշավները, անոնց երազն ու մուրազը, որոնք անարև և անկատար մնացին և անցան անանուն և անհիշատակ...:

Բայց թոռնիկներն հասեր են այսօր իրականացած այդ երազներուն՝ անհուն երջանկութիւն մը:

Անոնցմե մեկն է կանգներ ահա և կոգեկոչի իր քամբախտ պապիկն ու սև անցյալը և անոնց վերև բացված մեր չքնաղ արշալույսը:

Իր «Մայր Հայրենիքում» վերտառութիւն տակ «Էջմիածին» կամփոփե առանձնապէս շատ հետաքրքրական նոթեր: Մեր հայրենի աշխարհին մեջ տեղի ունեցած բազմաթիվ տեղեկութիւններ, հայագիտական, ուսումնական, գիտական, շինարարական, երաժշտական ու այլ բազմազան ճշուղերու վրա ցանկած գործունեութիւնց վաստակները անհագորբն կկարդանք և կլեցվինք արդար հպարտութիւն մը և հրճվանքով:

Տակավին կգտնենք հայրապետական այս պարբերագրին մեջ ուսումնասիրութիւններ, որոնք կտարածվին հին ու նոր ժամանակներու, դեմքերու և դեպքերու վրա: Սփյուռքի

հայ եկեղեցիներն ու հաստատությունները ձեռնհաս գրչով վեր կառնվին և ընթերցանություն համեղ էջեր կավելցնեն ամսաթերթին վրա:

«Էջմիածին» ունի տպագրական անթերի հարդարանք, գեղարվեստական տիպ ու տառ, կանոնավոր դասավորում և նյութերու ճոխություն: Անոր կազմն ու լուսանկարչական և մանրանկարչային զարդարանքներն ալ կմնան ամեն գովեստի արժանի:

Արտասահմանի մեր գաղթային աշխարհը իր եկեղեցիներով, գրական և լրագրական հաստատություններով կհավատամ, թե պարտավոր է ավելի ուշադիր ըլլալ Ամենայն Հա-

յոց Հայրապետական Մայր Աթոռի այս պաշտոնաթերթի վերաբերմամբ:

Որովհետև Արարատի շուքերուն տակ նստած հայուն փառավոր տնակը իր շեն ու պայծառ ժպիտով, թրթռուն երգով ու պարով մեզ պիտի ապրեցնե և մեր հոգին պահե՝ հաստատուն և տեականորեն կապված մեր անգին Հայրենյաց անթիվ սրբություններուն, հողին ու ջուրին, արևին և աստղերուն, որոնք Հայոց աշխարհն են իջեր և ա՛լ չեն թողուր, որ խավարն ապրի հոն և կամ չարաշուք ամպ մը մոտենա անոր հորիզոնին:

ՎԱՀԵ ՀԱՅԿ

(Բոստոն, «ՊԱՅՔԱՐ» օրաթերթ,
4 և 5 մարտի 1960 թ.)

